ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 մայիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

65
(2731)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵԾ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախում առաջիկայում հերթական մեծ հանրահավաքն է սպասվում՝ մայիսյան եռատոնին ընդառաջ: Արցախի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ հանրահավաքը նախաձեռնել են Արցախի ստորագրահավաքը նախաձեռնած երիտասարդները, որոնց Հայաստանում միացել եւ ստորագրահավաք է նախաձեռնել ԱԺ ՄԻՊ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը, որը 2 օրում մոտ 5 հազար ստորագրություն է հավաքել արդեն: Հանրահավաքը Արցախում Ադրբեջանի կողմից հայերի էթնիկ զտումը, ցեղասպանական քաղաքականությունը դադարեցնելու եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը կատարելու պահանջով է լինելու: Հանրահավաքը նաեւ մայիսյան հաղթանակների ոգով է կազմակերպվելու, լինելու են ելույթներ՝ դրան նվիրված: Մեր տեղեկություններով՝ հանրահավաքի նախապատրաստական աշխատանքները արդեն իսկ սկսվել են. չի բացառվում, որ այդ հանրահավաքին մասնակցեն նաեւ Արցախի իշխանությունները, ինչպես նաեւ ընդդիմությունը:



Հաջորդ շաբաթ Մոսկվայում կարող է տեղի ունենալ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի, ինչպես նաեւ արտգործնախարարների հանդիպումը: Մոսկվան է նման առաջարկով հանդես եկել: Մինչ այս, նկատենք, որ Վաշինգտոնում չորս օր շարունակ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը բանակցում էին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Համատեղ հայտարարության մեջ նշվում է, թե մի շարք հարցեր կողմերը համաձայնեցրել են, սակայն նաեւ տարաձայնություններ ունեն: Ռուս քաղաքագետ Ստանիսլավ Տարասովը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նկատեց, որ ԱՄՆ-ում մոռացել են Արցախի կարգավիճակի մասին: «Ադրբեջանը շարունակում է իր դիրքերն առաջ տանել, նա նաեւ չի զիջելու: Եթե Երեւանը համաձայնի Ադրբեջանի բոլոր պայմաններին, ապա այդ դեպքում հնարավոր է համաձայնության հասնել, հակառակ դեպքում գործընթացը կձգձգվի», - նշեց նա: Քաղաքագետի խոսքով՝ Արեւմուտքը փորձում է օգտվել աշխարհաքաղաքական իրավիճակից եւ ՌԴ-ի շուրջ զարգացումներից:

Հայաստանցի տնտեսվարողների մոտ բողոքի մեծ ալիք է հասունացել: Պատճառն օնլայն առեւտուրն է: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, այն փոքր-ինչ մեղմելու փոխարեն, ավելի է սրում: «Ժողովուրդ» օրաթերթին դիմած տնտեսվարողների խոսքերով՝ իրենք ստիպված են լինելու փակել իրենց խանութները, առեւտրի կետերը, քանի որ օնլայն առեւտրի պատճառով չեն կարողանում ապրանք վաճառել. մեծացել է այն հաճախորդների թիվը, որոնք նախընտրում են էլեկտրոնային առեւտրային հարթակի միջոցով ձեռք բերել իրենց ուզած հագուստը, կոշիկը, պայուսակը կամ այլ իր: Նման իրավիճակ առաջացել է ՀՀ մարզային քաղաքներում, որտեղ 4 եւ ավելի աշխատատեղ ունեցող խանութները սկսել են կամաց-կամաց փակվել՝ կուտակելով մեծ պարտքեր: Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն ի՞նչ է անում այս խնդիրը լուծելու համար: Պարզվում է՝ ոչինչ: «Ժողովուրդ» օրաթերթը տնտեսվարողների մտահոգությունները փոխանցեց նախարարին, սակայն նրա կարծ, անտարբեր պատասխանը խիստ զարմացրեց մեզ. «Կանխատեսված էր դա: Դա բիզնես ռիսկ է»: Այնուամենայնիվ, «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց եւս մեկ անգամ նախարարից հետաքրքրվել, թե ինչ է ձեռնարկում տնտեսվարողներին այս հարցում աջակցելու համար: «Էն օրը Ազգային Ժողովում պատգամավորներից մեկը հարց էր տվել, ասում է՝ գյուղացիները կաղամբ են աճեցրել, չեն կարողանում ծախեն, ինչ որ ծրագիր ունե՞ք, որ ծախեն: Ասում եմ՝ ոչ, մենք կաղամբ գնելու ծրագիր չունենք: Նույն ձեւի մենք «Փեթակ»-ների, Չինաստանից եւ Թուրքիայից կարգոյով, առանց հարկերը վճարելու ներմուծող եւ առանց տեխնոլոգիական հագեցվածության ընկերությունների, խանութների բիզնեսը փրկելու ծրագիր չենք կարող ունենալ: Մենք աշխատում ենք, որպեսզի Հայաստանում բիզնեսը լինի մեծ կապիտալով, բարձրակարգ, տեխնոլոգիապես հագեցած բիզնես»,- նկատեց երկրի տնտեսության համար «մտահոգ» նախարարը: Բայց, մյուս կողմից, նկատենք, որ խանութների փակվելուն զուգահեռ՝ բազմաթիվ քաղաքացիներ ստիպված դառնում են գործազուրկ: Էկոնոմիկայի նախարար Քերոբյանին այս խնդիրն ամենեւին չի հետաքրքրում. «Մեզ աշխատատեղերը չեն հետաքրքրում, մեզ հետաքրքրում են բարձրակարգ եւ մրցունակ բիզնեսները: Աշխատատեղերը հետեւանք է, ոչ թե նպատակ»:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետությունում սպառողական շուկայում 12-ամսվա ընթացքում գնաճը 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, կազմել է 3.2%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.1%: ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկանում ենք, որ 2023թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.2%. նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.4% հավելաճ: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.1%-ով: 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է հացի 1.9%, մարգարինի՝ 2.6%, թարմ կաթի՝ 5.9%, պանրի՝ 11.4% գնաճ: Շաքարի եւ շաքարավազի ապրանքախմբում 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, արձանագրվել է 10.7%, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 1.5% գնանկում: Ձվի գինը 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, նվազել է 1.8%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 1.5%-ով: Մրգի ապրանքախմբում 2023թ. ապրիլին, 2022թ. ապրիլի համեմատ, գներն աճել են 6.6%-ով, իսկ 2023թ. մարտի համեմատ՝ 6.3%-ով: Պանրի գինը նախորդ տարի ապրիլ ամսին տատանվել է 2036-2850 դրամի սահմաններում, իսկ այս տարի այն արժե 2660-3950 դրամ:

ՊԱՐՏԱԴՐԱՆՔ ԿԱ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ ՄԱՐՍԵԼՈՒ

Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների՝ շուրջ 4 օր տեւած վաշինգտոնյան բանակցությունները երեկ ավարտվեցին:

Հանդիպման վերաբերյալ շատ մանրամասներ հայտնի չեն. կողմերը խուսափում են բացահայտել՝ ինչ է քննակվել Վաշինգտոնում: Նիկոլ Փաշինյանը ԱԺ ամբիոնից հայտարարել է, որ վաշինգտոնյան բանակցությունների սեղանին կա փաստաթուղթ:

«Ամերիկայի ձայն»-ը հոդված էր հրապարակել, որ Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները բանակցում են մի փաստաթղթի շուրջ, որը կրում է «Հարաբերությունների կարգավորման համաձայնություն» անունը: Ըստ այդ հոդվածի՝ համապարփակ համաձայնագրի շուրջ ընթացող բանակցություններում կողմերի միջեւ քննարկվող հարցերից մեկն է վերաբերմունքը էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ երկու երկրներում, որն անդրադառնում է էթնիկ փոքրամասնությունների իրավունքներին ու անվտանգությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը վաշինգտոնյան բանակցությունների շուրջ զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Աննա Կոստանյանի հետ:

-Տիկին Կոստանյան, ամփոփելով վաշինգտոնյան բանակցությունները՝ ինչպե՞ս կգնահատեք դրանք, ի՞նչ տվեցին մի քանի օր տեւած այդ բանակցությունները:

-Եթե հետեւենք ամերիկացի տարբեր պաշտոնյաների խոսույթին, կարող ենք հասկանալ, որ որոշակի ճնշում կա Հայաստանի վրա: Թե ճնշում կա արդյոք Ադրբեջանի վրա, ես վստահ չեմ: Առնվազն հայկական կողմին ուղղված ճնշումները ամերիկացի ներկա եւ նախկին տարբեր պաշտոնյաների բերանով տարածվում է: Այս բանակցություններից ակնկալիքները մեծ չեն առնվազն այն պատճառով, որ 5 տարին բավական էր հասկանալու, որ գործող իշխանությունը չունի բավարար կամք հայկական շահը պատշաճ ձեւով ներկայացնելու համար, հետեւաբար չեմ ակնկալում, որ իրենք կարողանալու են որեւէ դրական առաջընթաց արձանագրել այդ բանակցություններում: Այս իրավիճակում մեզ մնում է միայն հասարակությանը բացատրել, որ այս իշխանությունն ունակ չէ հայկական շահը պաշտպանել: Մեր խնդիրների լուծումը ոչ թե պետք է փնտրել Արեւելքում կամ Արեւմուտքում, այլ ինքներս մեր մեջ:

-Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ Վաշինգտոնում բանակցությունների սեղանին կա փաստաթուղթ: Ըստ Ձեզ՝ ի՞նչ փաստաթղթի մասին է խոսքը:

-Հաշվի առնելով մի քանի հանգամանքներ՝ որոշակի ստիպողականություն զգացվում է, պարտադրանք կա: Կասկածում եմ, որ Վաշինգտոնում փաստաթուղթ կստորագրվի, քանի որ, ամեն դեպքում, այդ փաստաթղթի նախագիծը, որը տարբեր ֆորմատներով դաշտ է նետվում, անգամ դրա անվանումն է անընդհատ վերաձեւակերպվում, այս ամենը հուշում է, որ կողմերը դեռեւս վերջնական փաստաթուղթ ստորագրելուն պատրաստ չեն: Նիկոլ Փաշինյանը շատ հրաշալի տեսնում է, որ օր օրի իր վարկանիշը գահավիժում է, հասկանում է՝ եթե որեւէ պայմանագիր ստորագրի, ինքը չի մարսելու: Ժողովրդին ինչքան էլ մեղադրում ենք, որ անտարբեր են, քնած են, միեւնույնն է, ծայրահեղ վատ փաստաթղթի դեպքում այդ բռնկումը լինելու է: Սա հասկանում է նաեւ Արեւմուտքը, ուստի ներքին դեստաբիլիզացիա թույլ չտալու համար կփորձեն ինչ-որ չափով դրական դրույթներ ներառել այդ փաստաթղթում: Տրամաբանական է, որ մեզ համար լիարժեք դրական փաստաթուղթ չի լինելու, հետեւաբար մենք պետք է մեր երկրի ներսում փորձենք իրավիճակ փոխել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ի՞ՆՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՆ ՏՎԵԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հայկական, ամերիկյան եւ ադրբեջանական կողմերն ամփոփիչ հայտարարություններ են ներկայացրել այս օրերին Վաշինգտոնում ընթացող եռակողմ հանդիպումների մասին, որոնք մի քանի օր են տեւել:

Մասնավորապես, նշվում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները երկկողմ համաձայնագրի որոշ հոդվածների շուրջ ունեցել են փոխըմբռնման առաջընթաց, սակայն մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ դիրքորոշումները մնացել են տարբեր: Այս մասին ասված է եղել Ամերիկայի Միացյալ Նահանգներում քառօրյա բանակցություններից հետո կողմերի տարածած համատեղ հայտարարության մեջ: Հայտարարության մեջ նշված չէ, թե որ առանցքային հարցերի շուրջ են կողմերը մնացել իրենց հակադիր դիրքորոշումներին:

Չորս օր տեւած բանակցություններից հետո հաղորդագրություն է տարածել նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների պետքարտուղար Էնթոնի Բլինքենը: Նա հայտարարության մեջ նշել է, որ թե՛ երկկողմ, թե՛ եռակողմ քննարկումներից հետո կողմերը շոշափելի առաջընթաց են գրանցել բարդ խնդիրների լուծման հարցում:

«Ես առաջարկել եմ նախարարներին վերադառնալ իրենց երկրներ՝ իրենց կառավարությունների հետ կիսելու այն հեռանկարը, որ հավելյալ բարի կամքի, ճկունության եւ փոխզիջումների դեպքում համաձայնությունը հասանելի է», - ընդգծել է ԱՄՆ պետքարտուղարը: ԱՄՆ պետքարտուղարը նաեւ եզրափակիչ ելույթով էր հանդես եկել՝նշելով, թե լավատես է, որ այս քննարկումները խաղաղության համաձայնագրի հիմք են ստեղծել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐԵԼ Է ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՂԾԻՔ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրավապահները գործընթաց են սկսել բուհերի ռեկտորների դեմ: Առաջին մեղադրյալը Ֆիզկուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ռեկտորն է: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դիմել է ԿԳՄՍ նախարարին՝ ռեկտորի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Գլխավոր դատախազություն՝ տեղեկությունը պարզելու համար, ինչին ի պատասխան՝ դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը հայտնեց. «Քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում իրականացվող քրեական վարույթի նախաքննությամբ բավարար փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Դ.Խ-ն, զբաղեցնելով պետության կողմից ստեղծված՝ հիմնադրված «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի պաշտոնը, հանդիսանալով պետության կողմից ստեղծված՝ հիմնադրված ինստիտուտի անունից հանդես գալու լիազորություն ունեցող պաշտոնատար անձ, անձնական այլ դրդումներով կատարել է պաշտոնեական կեղծիք, այն է՝ 2022թ. փետրվարի 2-ին պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթղթի՝ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող նյութական կրիչի մեջ մտցրել է Արմեն Վազգենյանի կողմից 2006 թվականին Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ (ներկայիս՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ) ընդունվելու եւ իբրեւ 2010 թվականին «Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ» մասնագիտությամբ ավարտելու, նրան «Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի, շախմատի մարզչի» բակալավրի աստիճան շնորհված լինելու, ինչպես նաեւ, տեխնիկական պատճառներից ելնելով, դիպլոմը 2022 թվականի հունիսին հանձնման ենթակա լինելու վերաբերյալ կեղծ տեղեկություններ եւ այն տրամադրել Արմեն Վազգենյանին այն պայմաններում, երբ վերջինս հիշյալ ինստիտուտն ավարտած չի եղել եւ տեղեկանքը տրամադրելու պահին ունեցել է չհանձնված պետական քննություն:

Հանցանքի կատարումը վկայող փաստերի հիման վրա՝ հսկող դատախազի կողմից 2023թ. մայիսի 2-ին որոշում է կայացվել Դավիթ Խիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

Նույն օրը որոշումն ուղարկվել է վարույթն իրականացնող մարմնին՝մեղադրանքը Դ. Խիթարյանին ներկայացնելու համար, միաժամանակ հանձնարարվել է նրա նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառել պաշտոնավարման կասեցումը»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՀԵՏ

Մայիսի 4-ին «Հայաստան» խմբակցության պատգամավորները հանդիպել են ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Այս մասին ArmLur.am-ին հայտնեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը:

«Զարմանում եմ, որ զարմանք են առաջացնում նման հանդիպումները. դրանք պարբերաբար լինում են: Ամենատարբեր հարցերի շրջանակներն ենք երեկ քննարկել»,- ասաց պատգամավորը:

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Սոթքի հանքի աշխատակիցները երեկ փորձել են գնալ աշխատանքի եւ վերսկսել իրենց աշխատանքները, սակայն չի հաջողվել: Աշխատակիցները ArmLur.am-ին պատմեցին, որ երբ սկսել են միացնել տեխնիկաները եւ աշխատեցնել դրանք, ադրբեջանական ՋՈՒ-ն սկսել է կրակոցներ արձակել:

Հիշեցնենք, որ ապրիլի 23-ին՝ ժամը 11:50-ի սահմաններում, Սոթքի հատվածում տեղակայված հայկական դիրքում, նախնական տվյալներով, հակառակորդի կրակոցից հրազենային մահացու վիրավորում էր ստացել ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Արտյոմ Արսենի Պողոսյանը:

ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Պարենի համաշխարհային գներն ապրիլին տարվա ընթացքում առաջին անգամ աճել են շաքարի, մսի –եւ բրնձի գնանշումների բարձրացման պատճառով:

Պարենային ապրանքների գների ինդեքսը, որն արտացոլում է պարենի հիմնական տեսակների միջազգային գների ամսական փոփոխությունները, ապրիլին կազմել է 127,2 կետ, ինչը 0,6%-ով ավելի բարձր է, քան մարտ ամսին: Ինդեքսը 19,7%-ով ցածր է 2022 թվականի ապրիլի մակարդակից, բայց 5,2%-ով ավելի բարձր է, քան 2021 թվականի ապրիլին:

Շաքարի գների ինդեքսը, մարտի համեմատությամբ, ավելացել է 17.6 %-ով՝ հասնելով առավելագույն ցուցանիշին՝ 2011 թվականի օգոստոսից ի վեր: Պատճառը Հնդկաստանում, Չինաստանում, Թայլանդում եւ Եվրոպական Միությունում ակնկալվող արտադրության կրճատումներն են:

Մսի գների ինդեքսն ապրիլին ավելացել է 1.3 %-ով: Միեւնույն ժամանակ, հացահատիկի գների ինդեքսի ընդհանուր նվազում է դիտվել՝ մարտ ամսվա համեմատությամբ 1,7 %-ով, իսկ 2022 թվականի ապրիլի համեմատությամբ՝ 19.8 %-ով: Բուսական յուղի գների ինդեքսն ապրիլին նվազել է 1.3 %-ով: Ձեթի գների նվազում է դիտվում արդեն 5 ամիս շարունակ:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՋԱՆՔԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼ

Վաշինգտոնում չորս օր շարունակվեցին հայ-ադրբեջանական բանակցությունները: Այդ բանակցությունների ֆոնին Հայաստանի վարչապետը երեկ Պրահայում հայտարարեց՝ անորոշ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության եւ իրավունքների երաշխավորման մեխանիզմը, անորոշ է նաեւ Ստեփանակերտ-Քաֆու երկխոսության ձեւաչափը:

Ելույթ ունենալով Պրահայի անդրատլանտյան հարաբերությունների կենտրոնում՝ Նիկոլ Փաշինյանը տեղեկացրեց՝ մինչ այս պահը հնարավոր չի եղել համաձայնեցնել նաեւ խաղաղության պայմանագրի տեքստի մեկնաբանության հարցում տարակարծությունները հաղթահարելու մեխանիզմները: Հայաստանի ղեկավարի խոսքով՝ չկա նաեւ որեւէ համաձայնություն խաղաղության պայմանագրի իրագործման միջազգային մեխանիզմների հարցում: Միեւնույն ժամանակ Փաշինյանը դարձյալ շեշտեց՝ չնայած առկա խոչընդոտներին՝ Երեւանը շարունակում է ջանքեր գործադրել խաղաղության ուղղությամբ: Քննարկման մասնակիցներից մեկը, հիշեցնելով Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաեւ Հայաստանի եւ հայերի դեմ Ադրբեջանի գործողությունները, հարցրեց՝ ինչու պաշտոնական Երեւանը չի խոսում «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքից:

Փաշինյանի իշխանությունն այս սկզբունքի մասին սկսեց խոսել 44-օրյա պատերազմի ընթացքում, հետո էլ այն տեղ գտավ իշխող կուսակցության նախընտրական ծրագրում: Վարչապետը «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքին որեւէ կերպ չանդրադարձավ, միայն վերահաստատեց նախկին հայտարարությունները՝ Բաքուն էթնիկ զտում է նախապատրաստում, իսկ ԼՂ հայերի անվտանգությունն ու իրավունքները պետք է հաստատագրվեն բանակցություններում, որոնք տեղի կունենան Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ, բայց, ինչպես խոստովանեց Հայաստանի առաջնորդը, Ալիեւի վարչակազմը նման ցանկություն չունի: «Մենք ոչ միայն սպասում ենք, նաեւ ավելի քան 30 տարի աշխատում ենք այս ուղղությամբ: Եվ մենք պետք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ լուծելու ԼՂ հիմնախնդիրը, հաստատելու տեւական խաղաղություն մեր տարածաշրջանում: Մենք հավատարիմ ենք խաղաղության օրակարգին, քանի որ մենք դրա համար մանդատ ենք ստացել նաեւ հայ ժողովրդից», - ասաց նա:

Ներկաներից մեկը Ռուսաստանի հետ հարաբերություններից հարցրեց: Փաշինյանը հրաժարվեց ուղիղ պատասխանել, ասաց միայն՝ կան հարաբերությունները բարդացնող գործոններ, այդ համատեքստում մատնանշեց Մոսկվայի առաջնորդած ՀԱՊԿ-ի հետ տարաձայնությունները եւ պնդեց, որ այդ ռազմական դաշինքը չի կատարել Հայաստանի առջեւ ստանձնած պարտավորությունները: Փաշինյանը քննարկումը ավարտեց Ուկրաինայի հակամարտության անկանխատեսելի ավարտի մասին դիտարկումներով, նշեց, որ իրավիճակն ամբողջությամբ անկանխատեսելի է, եւ որ չկա որեւէ վերլուծական, քաղաքագիտական կառույց, որը կարող է կանխատեսել, թե ինչ կլինի մեկ ամսից: «Միայն կարող եմ վստահ ասել, որ հաջորդ շաբաթ կգնամ Մոսկվա»,- հայտարարել էր Փաշինյանը՝ պատասխանելով հարցին, թե, իր կարծիքով, ինչ կարող է լինել մեկ ամսից Ուկրաինայում:

Թե ինչ օրակարգով է Մոսկվա գնում, եւ ինչ հանդիպումներ են նախատեսված, Հայաստանի վարչապետը չհստակեցրեց: Չնայած Բաքվի ռազմատենչ սպառնալիքներին, Հայաստանի շուրջ ստեղծված անվտանգային իրավիճակին, Արցախի շրջափակմանը՝ Երեւանը պատրաստ է խաղաղություն հաստատել Ադրբեջանի հետ. Պրահայում հայտարարեց վարչապետ Փաշինյանը չեխ պաշտոնակցի հետ ասուլիսում: Նա մի քանի անգամ հատուկ շեշտեց՝ ոչ թե «չնայած այդ իրավիճակին», այլ «հենց այդ իրավիճակով» պայմանավորված է Երեւանը խաղաղության անհրաժեշտություն տեսնում եւ պատրաստ է կառուցողական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ–ՉԵԽԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում մայիսի 4-ին անցկացվել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 6-րդ նիստը:

Նիստի շրջանակներում քննարկվել է առեւտրատնտեսական հարցերի լայն շրջանակ, մասնավորապես՝ արդյունաբերության եւ արդյունաբերական կոոպերացիայի, բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, տրանսպորտի, գիտատեխնիկական, կրթության, մշակույթի, շրջակա միջավայրի, զբոսաշրջության եւ այլ ոլորտներում համագործակցությունը, ինչը կնպաստի երկու երկրների տնտեսական կապերի ամրապնդմանը:

Նիստի արդյունքում չեխական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա՝ ստորագրվել է տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստի արձանագրությունը:

Միջոցառման մասնակից գործարարների համար կազմակերպվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հանդիպումներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԿԱՋՄԱԿԵՐՊՎԻ

Ռուսաստանի նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպման «որոշակի ծրագրեր քննարկվում են»:

«Առայժմ եկեք առաջ չընկնենք. որոշակի ծրագրեր քննարկվում են: Կախված նրանից, թե ինչպես կավարտվեն քննարկումները, մենք համապատասխան հայտարարություն կանենք: Առայժմ դա վաղաժամ ենք համարում», - երեկ լրագրողներին հայտնել է Կրեմլի խոսնակը՝ պատասխանելով հաջորդ շաբաթ Փաշինյան-Պուտին բանակցությունների հնարավորության մասին հարցին:

Մայիսի 4-ին՝ Պրահա կատարած այցի ժամանակ, Փաշինյանը հայտնել էր, որ հաջորդ շաբաթ պատրաստվում է այցելել Մոսկվա:

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

Մայիսի 4-ին Արլինգթոնում (ԱՄՆ) կայացել է ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի եռակողմ հանդիպումը՝ եզրափակելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման շուրջ քննարկումների փուլը:

Այս մասին հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հյուրընկալել է փակման լիագումար նիստ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

3 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության ծանր հանցագործությունների ֆնությունը բաժնում իրականացված ֆինչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում բացահայտվել է ՍՊ ընկերության հիմնադրի բարեկամի կողմից ընկերության 3.003,890.851,76 դրամ գումարը հափշտակելու դեպքը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ ՍՊ ընկերության հիմնադրի մորաքրոջ որդին՝ Ռ.Ա.-ն, 1990-ական թվականներից աշխատել է այդ ընկերությունում: Այն զբաղվել է արդյունաբերական սարքավորումների, նյութերի, հումքերի ձեռք բերմամբ եւ դրանք տարբեր երկրների, այդ թվում՝ Թուրքմենստանի Հանրապետության պետական ընկերություններին մատակարարմամբ, որոնք մեծամասամբ իրականացվել են պետական գնումների շրջանակներում կազմակերպված միջազգային մրցույթներին մասնակցելու եւ հաղթող ճանաչվելու արդյունքում:

2009 թվականից սկսած՝ Ռ.Ա.-ն եղել է ընկերության ներկայացուցիչը Թուրքմենստանի Հանրապետությունում: Մինչեւ 2012 թվականը ապրանքները Թուրքմենստանի պետական ընկերություններին մատակարարվել են ուղղակի եղանակով, եւ ընկերությունը, առանց որեւէ խնդրի, ստացել է մատակարարված ապրանքի գումարը: Արդյունքում Ռ.Ա.-ի հանդեպ ընկերության ղեկավարության մոտ ձեւավորվել է վստահություն:

Ավելի արդյունավետ եւ դյուրին եղանակով աշխատելու նպատակով, ինչպես նաեւ Ռ.Ա.-ի առաջարկով ընկերությունը սկսել է մատակարարումներն իրականացնել Թուրքմենստանում գրանցված անհատ ձեռնարկատերերի միջոցով: Արդյունքում նշված անհատ ձեռնարկատերերի հետ ընկերության կողմից 2012-2016թթ. ընկած ժամանակահատվածում կնքվել է ընդհանուր 15.639.903 ԱՄՆ դոլար եւ 15.840 եվրո արժեքով թվով 14 մատակարարման պայմանագիր, որոնց շրջանակներում Թուրքմենստանի պետական ընկերություններից անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվներին փոխանցվել է 8.158.297.31 ԱՄՆ դոլարին համարժեք թուրքմենական մանաթ:

Ռ.Ա.-ն, անձամբ կառավարելով ընկերության ֆինանսական ելքերն ու մուտքերը, կայացնելով միանձնյա որոշումներ, փաստացի տնօրինելով տվյալ երկրում մատակարարված ապրանքները եւ դրանց դիմաց վճարված գումարներ, 2012-2018թթ. ընկած ժամանակահատվածում քննությամբ դեռեւս չպարզված անձանց հետ կանխիկացումների եւ փոխանցումների միջոցով ուղղակի դիտավորությամբ հափշտակել է փաստացի իր կողմից ղեկավարվող 4 անհատների անուններով բացված անհատ ձեռնարկատերերի հաշվեհամարներին՝ Թուրքմենստանի Հանրապետությանը ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքների դիմաց փոխանցված առանձնապես խոշոր չափերի՝ 22.170.572,38 թուրքմենական մանաթին համարժեք 3.003,890.851,76 դրամ գումար: Ապա, կեղծելով բանկային քաղվածքները եւ փոխանցումների բացակայության մասին վկայող փաստաթղթերը, նա ՍՊ ընկերության տնօրինությանը հավաստիացրել է, որ հափշտակված գումարները Թուրքմենստանի Հանրապետության կողմից անհատ ձեռնարկատերերի հաշվեհամարներին չեն փոխանցվել՝ այդկերպ հնարավորություն ստեղծելով իր համար տնօրինել հափշտակված գումարները:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ռ.Ա.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված եղել կալանքը: Նախաքննության ընթացքում նրա կողմից կեղծիք կատարելու դրվագով որոշում է կայացվել հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Ռ.Ա.-ի մասով նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթից անջատված մասի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՔԱՇՔՇՈՒԿ

ՀԱՅՀՈՅԵԼ ԵՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

2023թ. մայիսի 5-ին՝ ժամը 04:00-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակից զեկուցագիր է ստացվել այն մասին, որ «Ճամբարակ» տեղամասում իրականացվող ծառայության ընթացքում՝ 2023թ. մայիսի 4-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Ճամբարակ քաղաքի Սեպտեմբերի 21 փողոցում նկատել են, որ «Տոյոտա Ռավ-4» մակնիշի ավտոմեքենան կանգնել է հետիոտնային անցման վրա, եւ զգուշացրել են հեռացնել այն:

Դրանից հետո ստուգելու նպատակով Գ. Նժդեհի փողոցում պարեկային ծառայողները կանգնեցրել են նշված ավտոմեքենան, եւ պարզվել է, որ վարորդն իր մոտ չունի վարորդական իրավունքի վկայական:

Խոսակցության ընթացքում նույն փողոցում վարորդի եւ ուղեւորի գլխավորությամբ մոտ 20-25 անձինք սկսել են քաշքշել պարեկային ծառայողներին, տվել սեռական բնույթի հայհոյանքներ, նրանցից մեկը բռունցքով հարվածել է պարեկային ծառայողներից մեկի դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ, եւ դիմել փախուստի:

Դեպքի վերաբերյալ ստացված հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Մայիսի 5-ին, առերեւույթ հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքով, ձերբակալվել են նշված ավտոմեքենայի 36-ամյա վարորդը, 40-ամյա ուղեւորը եւ 29-ամյա մեկ քաղաքացի, որոնք հանդիսանում են Ճամբարակ քաղաքի բնակիչներ:

Նախաքննությունը շարունակվում է: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր վարութային եւ ապացուցողական գործողությունները դեպքի հանգամաքները լիարժեք պարզելու, միջադեպի մասնակիցների ինքնությունը պարզելու, բոլորի արարքներին իրավական գնահատականներ տալու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԱՊՕՐԻՆԻ ՄԻԳՐԱՑԻԱ

2023 թվականի ապրիլի 28-ին հսկող դատախազը հաստատել է Հայաստանի Հանրապետության 16 քաղաքացիների ապօրինի միգրացիան կազմակերպելու վերաբերյալ քրեական վարույթի մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել է դատարան:

Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում 2022 թվականի հունիսի 20-ին նախաձեռնված վարույթով՝ 5 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 470-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ անօրինական միգրացիայի կազմակերպումը):

Վարույթի ընթացքում պարզվել է, որ վերոնշյալ 5 անձինք, նախնական համաձայնությամբ, 18 եւ 26 հազար ԱՄՆ դոլարի դիմաց, կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կազմակերպել են Հայաստանի Հանրապետության 16 քաղաքացու անօրինական միգրացիան Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Մեղադրյալներից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը, չորսի նկատմամբ՝ գրավը:

ՏՈՒԺԵԼ ԵՆ 5 ԱՆՁ

Լոռու մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն մայիսի 5-ին՝ ժամը 07:39-ին, ահազանգ է ստացվել, որ Լեռնապատ գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, կան տուժածներ, անհրաժեշտ է օգնություն:

Պարզվել է, որ Վանաձոր-Սպիտակ ավտոճանապարհի 13-րդ կմ-ին բախվել են VAZ-2107 եւ VAZ-2106 մակնիշների ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը տուժածներ Հ. Լ.-ն (ծնված 1996 թ.), Ա. Թ.-ն (ծնված 1988 թ.), Խ. Ը.-ն (ծնված 2006 թ.) եւ Հ. Ա.-ն (ծնված 1960 թ.) տեղափոխվել են Վանաձորի ԲԿ, որտեղ Հ. Լ.-ի եւ Ա. Թ.-ի առողջական վիճակը գնահատվել է ծանր, Խ. Ո.-ինը՝ միջին ծանրության, իսկ Հ. Ա.-ինը՝ բավարար:

Փրկարարները VAZ-2107 մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել ուղեւոր Գ. Վ.-ին (ծնված 2002 թ.) եւ մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային: Տուժածը հոսպիտալացվել է Վանաձորի ԲԿ, որտեղ նրա առողջական վիճակը գնահատվել է բավարար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՈՌՈԳԵԼԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ

Տավուշի մարզպետարանից տեղեկացա, որ Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, որից վարելահող՝ 25 485,3 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 1981,8 հեկտար, այդ թվում՝ խաղողի այգիներ՝ 1195,3 հեկտար, պտղատու այգիներ՝ 786,5 հեկտար, խոտհարքներ՝ 9400,6 հեկտար, արոտավայրեր՝ 63 006 հեկտար, այլ՝ 10791,8 հեկտար: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 6779,9 հեկտար, որից տնամերձեր՝ 1215,8 հեկտար: 2022 թվականի պետական բյուջեով Հայաստանում ջրամբարաշինությանը հատկացվել է 22 միլիարդ դրամ, 2023 թվականի պետական բյուջեով այդ գումարը կիսվել է, ջրամբարների շինարարությանը հատկացվել է 11 միլիարդ դրամ: 2017 թվականին Տավուշի մարզում գոյություն ուներ պետական բյուջեի միջոցներով Կողբի եւ Հախումի ջրամբարների շինարարության ծրագիր, նախատեսվում էր սահմանամերձ տարածքներում կառուցվելիք այդ ջրամբարներում կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր, սակայն այդ ջրամբարներն այդպես էլ չկառուցվեցին, 2018 թվականի իշխանափոխությունից հետո Տավուշի մարզում ոչ մի ջրամբար չկառուցվեց: Տավուշի մարզի գետերը՝ Աղստեւը, Ոսկեպարը, Հախումը, Քարահանը, Վրաստանի տարածքով անցնելուց հետո հոսում են Ադրբեջան, այնտեղ կուտակվում ջրամբարներում, ոռոգում այդ երկրի հողատարածքները, այգիները:

ԾԵԾԵԼ Է ԿԱՊԻՏԱՆԻՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում շարունակվում է Լոռու մարզի Ճոճկան գյուղի բնակիչ, 1990թ. ծնված Նվեր Հախվերդյանի դատավարությունը: Ն. Հախվերդյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՊՆ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, 2022 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 17-ն անց 40-ի սահմաններում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ վիճաբանել է իր նկատմամբ պետ հանդիսացող կապիտան Նարեկ Պետրոսյանի հետ, որի ընթացքում բռնություն է գործադրել Ն. Պետրոսյանի նկատմամբ՝ աջ ձեռքի բռունցքով երկու անգամ հարվածել է նրա կրծքավանդակին՝ վերջինիս պատճառելով ֆիզիկական ցավ: Ն. Հախվերդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 519 հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Սույն քրեական գործով մեղադրանքը դատարանում պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐՎԵԼ Է ՇՈՒԿԱՅԱԿԱՆԻՑ ԷԺԱՆ

Երեւան քաղաքի Սարալանջի 1 հասցեում գտնվող նախկին «Երիտասարդական պալատ» պետական փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնված 31780,0 քմ ընդհանուր մակերեսով հողամասը, որի կադաստրային արժեքը կազմել է 805 մլն 623 հազար դրամ, իսկ շուկայականին մոտարկված արժեքը՝ 4 մլրդ 430 մլն 926 հազար 500 դրամ, 2004 թվականի հունվարի 16-ին օտարվել է 62 մլն 973 հազար 405 դրամով:

ArmLur.am-ը Գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունից տեղեկանում է, որ 2004 թվականի հունվարի 16-ին Երեւանի քաղաքապետը, խախտելով «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու եւ օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին»կառավարության որոշումը, ինչպես նաեւ Հողային օրենսգրքի պահանջները, պետական սեփականություն հանդիսացող նախկին «Երիտասարդական պալատ» ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրված Սարալանջի 1 հասցեում գտնվող 31780,0 քմ մակերեսով հողամասը, որի կադաստրային արժեքը 805 մլն 623 հազար դրամ է, իսկ շուկայականին մոտարկված արժեքը՝ 4 մլրդ 430 մլն 926 հազար 500 դրամ, ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքից էականորեն պակաս գնով՝ 62 մլն 973 հազար 405 դրամով, առանց օրինական հիմքերի, օտարել է «Ավանգարդ Մոթորս» ՍՊ ընկերությանը՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս:

Բացի այդ, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում իրականացված ուսումնասիրության արդյունքում առերեւույթ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով 2011 թվականին «Ավանգարդ Մոթորս» ընկերությանը կադաստրային արժեքով օտարվել են նաեւ Սարալանջի 1 հասցեում գտնվող 53.0 քմ եւ 4854.86 քմ մակերեսներով հողամասերը, մինչդեռ դրանցից 53.0 քմ մակերեսով հողամասը, համաձայն Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետի 2005 թվականի գրության, ընդգրկված է եղել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում եւ ենթակա չի եղել օտարման:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց, նոտարի, ինչպես նաեւ այլ անձանց կողմից առերեւույթ հանցանք կատարելու դեպք, 2023 թվականի ապրիլի 20-ին դատախազի կողմից առերեւույթ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի ապրիլի 22-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), 314-րդ հոդվածի 1-ին մասի (պաշտոնեական կեղծիք կատարելը) եւ 325-րդ հոդվածի 2-րդ մասի (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը) հատկանիշներով:

Գլխավոր դատախազությունը 2023 թվականի մայիսի 5-ին, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում, հայց է ներկայացրել Վարչական դատարան:

ՋԵՂՉԵՐ

ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼԻՍ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մի շարք որոշումներում եւ եզրակացություններում անդրադարձել է այն հարցին, թե զեղչի դեպքում որ գնից է իրականացվում ապրանքի գնի նվազեցումը՝ արձանագրելով հետեւյալը.

- ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գինն ակցիայի մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման գների միջին թվաբանականն է,
- եթե ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման համար ակցիայի մեկնարկի օրվան նախորդող ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման գնի փոփոխություն տեղի չի ունեցել, ապա «միջին գնի» հաշվարկման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ նախորդող ամսվա ցանկացած օրվա վաճառքի գինը հենց ապրանքի միջին գինն է,
- կոնկրետ օրվա ընթացքում ապրանքի վաճառքի տարբեր գների առկայության դեպքում, հօգուտ ակցիա իրականացնողի, այդ օրվա վաճառքի գին է դիտարկվում ապրանքի տվյալ օրվա վաճառքի ամենաբարձր գինը,
- այն դեպքում, երբ ակցիայի մեկնարկի օրվան նախորդող ամսվա ոչ բոլոր օրերին է տվյալ ապրանքի վաճառք իրականացվել, ապա վաճառք չիրականացված օրվա համար, հօգուտ ակցիա իրականացնողի, վաճառքի գին է ընդունվում նախորդող կամ հաջորդող օրերի վաճառքի գներից ամենաբարձրը, եթե այդ օրերի վերաբերյալ գնի փոփոխության, այդ թվում՝ որեւէ ակցիայի իրականացման հիմքով գնի նվազեցման վերաբերյալ հանձնաժողովում տեղեկություններ առկա չեն,
- արձանագրված վաճառքի գինը չի դիտարկվում տվյալ օրվա ապրանքի վաճառքի գին, եթե ակցիա իրականացնողն ապացուցում է, որ այդ գնի կիրառումը պայմանավորված է ոչ խտրական, օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված առանձին խումբ անձանց հասցեագրված մարքեթինգային քաղաքականությամբ, եւ ակցիա իրականացնողն ակցիայի մեկնարկին նախորդող մեկ ամսվա ընթացքում ունեցել է ապրանքի դրանից բարձր գնով վաճառք կամ առնվազն վաճառքի առաջարկ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 4 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ՝ 75 ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 5-ին՝ ժամը 01:45, ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը կանգնեց ամենամյա պլանային նախազգուշական վերանորոգման՝75 օր տեւողությամբ:

ՊՆՎ-2023-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետեւյալ հիմնական աշխատանքները՝

- ռեակտորի միջին վերանորոգում՝ ակտիվ գոտու լրիվ բեռնաթափմամբ,
- թիվ 2 եւ 3 գլխավոր շրջանառու պոմպերի հիմնանորոգում,
- թիվ 2 եւ 3 շոգեգեներատորների հիմնանորոգում,
- տուրբագեներատորների ընթացիկ վերանորոգում,
- շոգետուրբինների ընթացիկ վերանորոգում:

Վերը նշված հիմնական աշխատանքներից բացի, իրականացվելու են անվտանգային որոշ համակարգերի արդիականացմանն ուղղված աշխատանքներ, ինչպես, օրինակ, պատասխանատու սպառիչների հովացման համակարգի խողովակաշարերի փոխ: արինում

Նախատեսվող աշխատանքներում, ՀԱԷԿ-ի հիմնական արտադրամասերի աշխատակիցներից բացի, ներգրավված են ատոմակայանների համակարգերի եւ սարքավորումների վերանորոգման հարուստ փորձ ունեցող մասնագետներ Ռուսաստանի Դաշնությունից, Խորվաթիայից, Չեխիայից եւ այլ երկրներից:

Վերանորոգման գործընթացն իրականացվելու է ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի մասնագետների վերահսկողության ներքո:

ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի գործարկումը նախատեսվում է ս/թ հուլիսի 18-ին:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ապրիլի 3-ից մինչեւ 30-ն ընկած ժամանակահատվածում աշխարհում կորոնավիրուսով վարակվել է գրեթե 2,8 մլն մարդ, ավելի քան 17 հազարը մահացել է: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների համաձայն՝մահվան դեպքերի թիվը, նախորդ 28 օրվա համեմատությամբ, նվազել է 30 %-ով, վարակվածների թիվը՝17 %-ով:

Չորս շաբաթվա ընթացքում աշխարհում գրանցվել է վարակման 2 779 198 դեպք եւ 17 459 մահ:

28 օրվա ընթացքում հիվանդության ամենամեծ թվով դեպքերն արձանագրվել են ԱՄՆ-ում՝ 392 480, որին հաջորդում են Կորեայի Հանրապետությունը (330 509), Ճապոնիան (251 158), Հնդկաստանը (222 784) եւ Ֆրանսիան (197 190): Ապրիլի 3-ից մինչեւ 30-ն ամենաշատ մահվան դեպքեր են արձանագրվել ԱՄՆ-ում՝ 5 263: Այնուհետեւ հաջորդում են Բրազիլիան (1 255), Ռուսաստանը (993), Ֆրանսիան (871) եւ Իրանը (762):

Մայիսի 3-ի դրությամբ ԱՀԿ-ն համավարակի սկզբից ի վեր հաղորդումներ է ստացել կորոնավիրուսով 765 222 932 վարակվածների եւ 6 921 614 մահվան դեպքերի մասին:

32 ԳՈՐԾԻՉ

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՅԴ բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակից հայտնում են.

«ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակի աջակցությամբ բելգիացի եւ ֆրանսիացի թվով երեսուներկու քաղաքական եւ հասարակական գործիչներ հայտարարություն են ընդունել, որով դատապարտել են Ադրբեջանի կողմից ապօրինի անցակետի տեղադրումը եւ Արցախի բնակչության կրկնակի շրջափակումը: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է.

«Մենք դատապարտում ենք Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում անցակետի տեղադրումը, որը խորացնում է հումանիտար ճգնաժամը Արցախում եւ վատթարացնում է տարածաշրջանի փխրուն անվտանգությունը: Սույնով մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը կատարել իր պարտավորությունները, անհապաղ բացել Լաչինի միջանցքը, հեռացնել անցակետը, դադարեցնել թշնամական քաղաքականությունը Արցախի բնիկ հայ բնակչության դեմ եւ հանդես գալ որպես միջազգային հանրության պատասխանատու անդամ»:

Նշենք, որ ստորագրած անձինք հիմնականում Ֆլամանդական եւ Վալոնական՝ Արցախի հետ բարեկամության խմբի անդամներ են, որոնց հետ ՀՅԴ Եվրիպայի Հայ դատի հանձնախումբը ունի երկար եւ շարունակական դինամիկ հարաբերություններ:

ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանն արձագանքել է նախաձեռնությանը՝ նշելով. «Բարձր եմ գնահատում նմանատիպ նախաձեռնությունները քաղաքական եւ հասարակական անձանց կողմից, որոնք Բելգիայում եւ Ֆրանսիայում հարգանք են վայելում քաղաքական եւ հասարակական շրջանակներում: Սա քաղաքացիական գործիք է, որը ստիպում է եվրոպական երկրներում եւ ԵՄ գործադիր իշխանությանը այս հարցը օրակարգում պահել եւ կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:

Մենք էլ մեր հերթին կշարունակենք մեր ամենօրյա ակտիվ աշխատանքը քաղաքական եւ հասարակական տարբեր շրջանակների հետ, որպեսզի Արցախի խնդրի վերաբերյալ ընդունվեն հայանպաստ եւ բարենպաստ որոշումներ եւ գործողություններ:

Հայտարարությանը միացել են հետեւյալ անձինք.

Կառլ Վանլոու - Ֆլամանդական խորհրդարանի պատգամավոր եւ նահանգային սենատոր

Ալեսիա Կլաս - Ֆլամանդական խորհրդարանի անդամ եւ նահանգային սենատոր

Վարդ Քեննես - Կաստերլեի քաղաքապետ, Ֆլամանդական խորհրդարանի նախկին պատգամավոր

Մարկ Հենդրիքս - իրավաբան, Մեխելենի քաղաքային խորհրդի անդամ, Ֆլամանդական եւ Բենիլյուքսի խորհրդարանի նախկին անդամ

Կարիմ Վան Օվերմեյր - Ալստի ավագանու անդամ

Աննաբել Տավերնիե - Ֆլամանդական խորհրդարանի անդամ

Էլս Վան Հոֆ - Բելգիայի ֆեդերալ խորհրդարանի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, կանանց իրավունքների ակտիվիստ

Պիեռ դ'Արժան - Լյովենի համալսարանի (UCL) հանրային միջազգային իրավունքի պրոֆեսոր, Միջազգային իրավունքի ինստիտուտի անդամ, Միջազգային իրավունքի եվրոպական ընկերության նախագահ

Բեռնար Քուլի - Լյովենի համալսարանի (UCL) պրոֆեսոր եւ նախկին ռեկտոր

Ժորժ Դալլեման - Բելգիայի ֆեդերալ խորհրդարանի անդամ

Էմանուել դը Բոկ - Բրյուսելի ֆրանսախոս խորհրդարանի պատգամավոր

Ժյուլի դը Գրոտ - Բրյուսելի ֆրանսախոս խորհրդարանի նախկին նախագահ

Միշել Դը Մախդ - Բելգիայի ֆեդերալ խորհրդարանի անդամ

Մարկ Դեմեսմաքեր - Սենատոր

Պիտեր Դը Ռովեր - Բելգիայի ֆեդերալ խորհրդարանի պատգամավոր

Յենց Դը Ռայկը - Հետաքննող լրագրող

Սակիս Դիմիտրակոպուլոս - Բրյուսելի Համահունական եւ միջմշակութային կենտրոնի ղեկավար

Քրիստոս Դուլկերիդիս - Իքսելի քաղաքապետ

Էրվե Դուայեն - Նախկին պատգամավոր, Ժետի նախկին քաղաքապետ

Անդրե դյու Բուս - Էթերբեք քաղաքի ավագանու անդամ, նախկին սենատոր

Ժոզի Դյուբիե - Նախկին սենատոր

Էմրիկ Ֆյուզո - L'oeuvre d'Orient-ի միջազգային հարաբերությունների բաժանմունքի ղեկավար

Ալդա Գրեոլի - Սպա քաղաքի սոցիալական կենտրոնի նախագահ, նախկին պատգամավոր

Մարկ Հենդրիկս - իրավաբան, Մեխելենի քաղաքային խորհրդի անդամ, Ֆլամանդական եւ Բենիլյուքսի խորհրդարանի նախկին անդամ

Բենուա Լաննու - Պատմաբան

Աննիկ Լամբրեխտ - Ֆլամանդական խորհրդարանի անդամ, սենատոր եւ Բրյուգեի քաղաքային խորհրդի նախագահ

Մարի Լեկոկ - Բրյուսելի խորհրդարանի պատգամավոր

Գեորգիոս Սիդիրոպուլոս - Բելգիայի Պոնտոսցի հունական միությունների նախագահ

Սիմոնե Սուսսկինդ - Բրյուսելի խորհրդարանի նախկին պատգամավոր եւ նախկին սենատոր

Ժյուլի Սմաժ - Քաղաքական գործիչ, MR International-ի փոխնախագահ, Վավր քաղաքային խորհրդի անդամ

Տայս Վերբյուրխտ - Ֆլամանդական խորհրդարանի պատգամավոր եւ Մեխելենի քաղաքային խորհրդի անդամ

Ժուլիեն Օյթենդալը - Սենատոր, Բրյուսելի խորհրդարանի պատգամավոր

Գաետան Վան Խոյսենհովը - սենատոր (խմբի ղեկավար), Բրյուսելի խորհրդարանի եւ Վալոնիա-Բրյուսել ֆեդերացիայի պատգամավոր

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

«Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ» ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Երեւանում «ՎՏԲ-Հայաստան» բանկի աջակցությամբ տեղի ունեցավ «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» խաղի առաջնությունը, որին մասնակցում էին թիմեր բանկային եւ IT ոլորտներից: Ստացված բոլոր դրամական մրցանակները ծրագրի մասնակիցները եւ կազմակերպիչները նվիրաբերել են բարեգործական հիմնադրամին՝ քաղցկեղով հիվանդ երեխաների բուժման համար:

«Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» մրցաշարին մասնակցեցին ընդհանուր 9 թիմ, այդ թվում՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկը: Խաղն անցկացվեց երկու փուլով, որոնցից յուրաքանչյուրում առաջարկվել է պատասխանել 15 հարցի: Բարեգործական առաջնության արդյունքներով որոշվեցին հաղթողներ «Լավագույն թիմ», «Լավագույն խաղացող», «Լավագույն պատասխան» եւ «Լավագույն հարց» անվանակարգերում:

«Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում մենք հատկապես կարեւորում ենք բարեգործական գործունեությունը՝ մասնակցելով տարաբնույթ ծրագրերի: Մեզ համար ամենակարեւորն այն է, որ այս նախագիծը հնարավորություն է ընձեռում օգնել երեխաներին, որոնք աջակցության կարիք ունեն: Իսկ խաղի մասնակիցների համար սա գիտելիքները ստուգելու հիանալի հնարավորություն է պատասխանը փնտրելու համար տրված սեղմ ժամանակի պայմաններում»,- նշում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի անձնակազմի կառավարման վարչության պետ Արտյոմ Ղուկասյանը:

Այս տարի «ՎՏԲ-Հայաստան» բանկն ակտիվորեն մասնակցում է նաեւ երկրում իրականացվող բնապահպանական ծրագրերին: Բանկը մասնակցում է Հայկական դրամի 30-ամյակի առթիվ Լոռու մարզի Ձրաշեն եւ Ուրասար համայնքներում 50 հա նոր անտառի հիմնման նախագծին: Անտառատունկն իրականացվելու է փուլերով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳՐՔՈՒՅԿ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՈՎ

Մարգարիտա Վարդանյանը, որը ՀՀ ԱԺ 1-ին գումարման պատգամավոր է եղել, ընթերցողների դատին հանձնեց բանաստեղծությունների իր երկրորդ ժողովածուն՝ «Երբ դառնամ դեղձենի»-ն:

Ընթերցողներին միաժամանակ ներկայացվեց նաեւ Մարգարիտա Վարդանյանի «Աֆորիզմներ» գրքույկը: Հանդիպմանը ներկա էին գրական ոլորտի ներկայացուցիչներ: Խմբագիր Անի Փաշայանը նշեց՝ «Երբ դառնամ դեղձենի» ժողովածուն երկար է ստեղծվել, որպես գրականագետ՝ ողջունեց այդ հանգամանքը: Նա ընդգծեց՝ Մարգարիտա Վարդանյանը գրելիս երկար ճանապարհ է անցել, որ այն կոչվի ժողովածու: «Կարդալով եւ խմբագրելով Վարդանյանի ժողովածուն՝ պետք է ասեմ, որ մեր բանաստեղծական շղթան շարունակվում է: Պատկերացնո՞ւմ եք, որ այլեւս լավ բանաստեղծություն չգրվեր»,-շեշտեց նա:

Ըստ խմբագրի՝ գրողն անկեղծ է եղել. թվում է, թե ուրիշների կորցրած բառերն ու տողերն են: «Գրողը ճանաչում է աշխարհը, մարդկանց, նա իսկապես պտտվել է աշխարհում: Այս գրքում մենք տեսնում ենք այդ պտույտը»,- նշեց նա: Ըստ Փաշայանի՝ Մարգարիտա Վարդանյանի բանաստեղծությունները փոքրիկ պոեմներ են հիշեցնում, իսկ աֆորիզմների ժողովածուն շատ երկար կապրի: Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանն էլ ողջունեց՝Մարգարիտա Վարդանյանը կարողացել է գրողին իր մեջ բացահայտել ու լավ ներկայացնել: Գրքերը գրվել են 7 տարի: Մարգարիտա Վարդանյանը նշեց, որ գրքերը գրվել են երկար ու սիրով:

«Դրանք լիակատար «սաղմանավորվել են», անցել «հղիության» ամբողջ ժամանակաշրջանը եւ ծնվել են առողջ, փարթամ: Հիմա պետք է մենք տարածենք, խնամենք, մեծացնենք եւ փորձենք իրենց ինքնուրույն կյանքի ուղղորդել»,- նշեց հեղինակը: Վարդանյանն ասաց՝հաճախ ինքն իրեն հարց է տալիս՝ ինչու է գրում: «Բայց երկրորդ հարցը, որ ծնվում է, հետեւյալն է՝ինչո՞ւ եմ ապրում: Դրանք մոտավորապես նույն փիլիսոփայության հարցեր են: Եթե անկարող ես քեզ զսպել գրել, պետք է գրես, այլապես այդ մտքերը գուցե մեկ ուրիշ տեղ տանեն, գուցե՝ շատ վտանգավոր»,-ասաց հեղինակը: Նա գրքերում փորձել է անդրադառնալ ամենատարբեր թեմաների: «Բոլոր գրքերը երրորդ աչքով տեսածի մասին են: Այսինքն՝ ես ինձ նայում եմ երրորդ աչքով, ձեզ նայում եմ երրորդ աչքով եւ փորձում եմ միացնել այդ երեք աչքերի տեսածները»,- ասաց Վարդանյանը: Մարգարիտա Վարդանյանն իր առաջին գիրքը՝ «Մի բուռ աստղային փոշի» բանաստեղծությունների ժողովածուն, հրապարակել է 2016 թվականին:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ ՏՈՆ ԿՆՎԻՐԻ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հերթական անգամ հաճելին կմատուցի երաժշտության եւ կինոյի երկրպագուներին՝ մայիսի 20-ին հանդես գալով «Սիմֆոնիկ Հոլիվուդ» համերգով:

Համերգը, որը կղեկավարի դիրիժոր Հարություն Արզումանյանը, տեղի կունենա «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Կհնչի երաժշտություն «Աստղային պատերազմներ», «Մեռնել ուրիշ անգամ», «Մալենա», «Կարիբյան ծովի ծովահենները», «Ռոմեո եւ Ջուլիետ», «Լեգենդ դաշնակահարի մասին», «Մատրից», «Հարրի Փոթերը եւ փիլիսոփայական քարը», «Նախաճաշ Թիֆանիի մոտ», «Ֆորեստ Գամփ», «Գլադիատոր», «Առաքելությունն անիրագործելի է», «Կնոջ բույրը», «Կնքահայրը», «Սարդ-մարդը», «Գահերի խաղը», «Ռոկկի» կինոֆիլմերից:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԴԱՐՁԸ ԳՐԵԹԵ ԱՆՀՆԱՐ Է

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 35-ամյա հարձակվող Լիոնել Մեսիի վերադարձը «Բարսելոնա» գրեթե անհնար է: Պատճառը կատալոնական ակումբի ֆինանսական խնդիրներն են: Լա Լիգայի ներկայացուցիչները հերքել են լուրերը, թե «Բարսելոնայի» հետ քննարկել են այդ հարցը. հաղորդում է իսպանական AS-ը:

Ֆինանսական արդար խաղի կանոնները չխախտելու համար «Բարսելոնան» պետք է հաջորդ մրցաշրջանի համար ընդհանուր աշխատավարձը կրճատի 200 միլիոն եվրոյով:

«Բարսելոնան» դեռ պետք է գրանցի Գավիի, Արաուխոյի, Ալոնսոյի, Ռոբերտոյի եւ Բալդեի նոր պայմանագրերը: Այդ պայմաններում Մեսիի հետ պայմանագիր կնքելը գրեթե անիրական է:

«Բարսելոնան» ամռանը պետք է Լա Լիգային ներկայացնի առաջիկա երեք տարիների տնտեսական կայունության ծրագիրը, որում Մեսիի վերադարձի ծախսեր նախատեսված չեն:

Մեսիի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ կավարտվի հունիսին: Կողմերը մտադիր չեն երկարաձգել համագործակցությունը:

ԵՐԳԻԾԱԲԱՆԸ ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է

Երգիծաբան Եվգենի Պետրոսյանը վստահեցնում է, որ իր մոտ ամեն ինչ կարգին է, եւ ինքը վերակենդանացման բաժանմունքում չի հայտնվել:

«Ես պլանավորված ստուգում ունեմ, ի՞նչ վերակենդանացման բաժանմունք: Դա ուղղակի սովորական ստուգում է, որը ես տարին մեկ անգամ անցնում եմ»,- Teleprogramma.pro-ին տված հարցազրույցում ասել է Պետրոսյանը եւ նշել, որ սա առաջին դեպքը չէ, երբ լրագրողները կեղծ տեղեկություններ են հրապարակում:

Նրա խոսքով՝ մի անգամ ինքը գնացել է հիվանդանոց, սակայն հրատապ խնդիրների պատճառով այցը ստիպված են եղել հետաձգել: Այնուհետեւ լրատվամիջոցներում հաղորդագրություններ է տեսել այն թեստերի մասին, որոնք նա, իբր, հանձնել էր կլինիկայում: «Սա ոչ միայն սուտ է, այլեւ անձնական կյանքի ներխուժում: Ոչ ոք իրավունք չունի դա անել առանց թույլտվության: Ինձ մոտ ամեն ինչ լավ է»,- վստահեցրել է Պետրոսյանը:

Ավելի վաղ լրատվամիջոցներում տեղեկություն էր հայտնվել, որ Եվգենի Պետրոսյանն ատամնաբուժական իմպլանտի տեղադրումից հետո գտնվում է վերակենդանացման բաժանմունքում: Հաղորդվում էր, որ արտիստը, իբր, գնացել է ծնոտի ոսկորում ներդրված էնդոսեմային իմպլանտ տեղադրելու, որից հետո բողոքել է վերքից անդադար արյունահոսությունից:

● *Մայիսի 7-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ալլա Դուխովայի «Տոդես» բալետը» համերգը: Տոմսերի արժեքը՝8000-45000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որն է երրորդ երկրից ՀՀ ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը:

Ստելլա Բարսեղյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքն այդ ապրանքների հետ գործարքի արժեքն է, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման այդ ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք արտահանելու նպատակով վաճառելիս, եւ որը լրացվել է նշված համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հետեւյալ պայմանների կատարման դեպքում.

- գնորդի՝ ապրանքների օգտագործման եւ տնօրինման իրավունքների մասով սահմանափակումներ չկան՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք սահմանվել են Մաքսային միության մարմինների համատեղ որոշմամբ, սահմանափակում են այն աշխարհագրական տարածաշրջանը, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել, էապես չեն ազդում ապրանքների արժեքի վրա,
- ապրանքների հետագա վաճառքի, գնորդի կողմից այլ կերպ տնօրինելու կամ օգտագործելու արդյունքում ստացված եկամտի կամ հասույթի ոչ մի մաս ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի հատկացվում վաճառողին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, նշված համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան, կարող են կատարվել լրացուցիչ հաշվեգրումներ,
- գնորդը եւ վաճառողը փոխկապակցված անձինք չեն, կամ գնորդը եւ վաճառողն այնպես են փոխկապակցված մեկը մյուսի հետ, որ ներմուծվող ապրանքների հետ իրականացվող գործարքի արժեքն ընդունելի է մաքսային նպատակների համար՝ նշված հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների վաճառքը կամ դրանց գինը կախված չէ որեւէ պայմանից կամ պարտավորությունից, որի ազդեցությունը ապրանքների գնի վրա չի կարող քանակապես որոշվել:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե ինչ է իրենից ներկայացնում հողամասի կառուցապատման իրավունքը:

Ռոբերտ Մխիթարյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Կոտայքի մարզում

Լուսանկարն արվել է Մայիսի 5-ին՝ ժամը 09:21-ին, Կոտայքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Ազատի ջրամբարում սուզված ավտոմեքենան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական եւ ջրասուզական խմբերը:

Փրկարարները ջրամբարից դուրս են բերել «Izh» մակնիշի ավտոմեքենան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +14 + 18
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +18 + 20
Գեղարքունիք	0 + 4 +13 + 18
Լոռի	+ 2 + 6 +12 + 18
Տավուշ	+ 3 + 8 +20 + 24
Արագածոտնի լեռներ	- 1 + 3 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 23

Արարատ	+ 7 + 10 +24 + 26
Արմավիր	+ 6 + 8 +24 + 26
Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 5 +19 + 23
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
Արցախ	+ 7 + 11 +20 + 25
Երեւան	+ 7 + 9 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.5.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*